ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

Երևան – 10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

« » հոկտեմբերի 2018 թ. N

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ - ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
պարոն ԱՐԱ ՍԱՂԱԹԵԼՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սաղաթելյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-372-26.09.2018-ՊԻՄԻ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը.

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հոկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 1411 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՋԱՆՅԱՆ

«ՀԱՏՈՒԿ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՆՁԱՆՑ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-372-26.09.2018-ՊԻՄԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետության կառավարությունն առաջարկում է գործող օրենքի հոդվածները թողնել անփոփոխ՝ նկատի ունենալով հետևյալ հանգամանքները.

1. «Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական պահպանության օբյեկտների շարքին դասվում են սույն օրենքով սահմանված բարձրաստիճան պաշտոնատար անձինք, այն անձինք, որոնց սույն օրենքի համաձայն տրամադրվել է պետական պահպանություն, ինչպես նաև՝ օտարերկրյա պետությունների և կառավարությունների ղեկավարներն ու այլ անձինք՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվելու ժամանակ: Սույն հոդվածի համաձայն՝ բարձրաստիճան պաշտոնատար անձինք են համարվում Հայաստանի Հանրապետության նախագահը, վարչապետը, Ազգային ժողովի նախագահը և վարչապետի թեկնածուն: Ըստ նույն հոդվածի 3-րդ մասի՝ այլ պետական պաշտոնյաներին, հասարակական, քաղաքական, կրոնական և այլ գործիչներին, ինչպես նաև այլ անձանց կարող է պետական պահպանություն տրամադրվել վարչապետի որոշմամբ: Այդ անձանց պահպանությունը կարող է իրականացվել վարչապետի սահմանած իրավասու պետական մարմնի կողմից:

Սույն հոդվածի իմաստով Ամենայն Հայոց Կաթողիկոսը կրոնական գործիչ է, այլ ոչ թե բարձրաստիճան պաշտոնատար անձ, որի անվտանգության ապահովմանը վերաբերող հարցի կարգավորումն արդեն իսկ ամրագրված է օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով: Այսինքն՝ կրոնական գործիչներին վարչապետի որոշմամբ կարող է տրամադրվել պետական պահպանություն, որի իրականացումը կարող է հանձնարարվել թե՛ պետական պահպանությունն իրականացնող մարմին հանդիսացող պետական պահպանության ծառայությանը, թե՛ վարչապետի սահմանած մեկ այլ իրավասու պետական մարմնին:

Հարկ է նշել, որ ըստ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի տրամաբանության՝ նշված անձանց պետական պահպանության ապահովման անհրաժեշտության հարցը թողնված է վարչապետի հայեցողությանը, և պետական պահպանության ապահովման միջոցառումներն իրականացվում են՝ ելնելով անհրաժեշտության չափանիշներից,

այսինքն՝ ելնելով նրանց անվտանգությանն սպառնացող վտանգի բնույթից ու աստիճանից: Ուստի հաշվի առնելով վերոգրյալը՝ պետական պահպանությունից օգտվող անձանց շրջանակը (այդ թվում՝ կրոնական գործիչների) կարող է վերանայվել՝ կրճատվել կամ ավելացվել՝ ելնելով նրանց անվտանգությանն սպառնացող վտանգի բնույթից ու աստիճանից, ինչպես նաև այլ իրավիճակից:

Անհրաժեշտ է նկատի ունենալ նաև, որ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթների համաձայն՝ անհրաժեշտությունից ելնելով, վարչապետի որոշմամբ պետական պահպանություն կարող է տրամադրվել ոչ միայն Ամենայն Հայոց Կաթողիկոսին, այլ նաև մյուս կրոնական գործիչներին, քանի որ օրենքով այդ հնարավորությունն ամրագրվել է բոլորի համար: Այդ առումով գտնում ենք, որ օրենքն առավել ճկուն կարգավորումներ է նախատեսում՝ տվյալ հարցի կարգավորումը թողնելով վարչապետի հայեցողությանը, որը որոշում է ընդունում՝ ելնելով կոնկրետ իրավիճակից:

Ամփոփելով, հաշվի առնելով բարձրացված հարցի օրենքով նախատեսված կարգավորումների առկայությունը, Հայաստանի Հանրապետության կառավարությունը գտնում է, որ նախագծով ներկայացված առաջարկությունների ընդունման անհրաժեշտությունը բացակայում է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 հոկտեմբերի 2018 թվականի N 1411 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ՁԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի առաջին տեղակալ Արթուր Հովհաննիսյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Պ-372-26.09.2018-ՊԻՄԻ-011/0) քննարկելիս՝ կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2018 թ. հոկտեմբերի 25
Երևան

ՆԱԽԱԳԻԾ

Պ-372-26.09.2018-ՊԻՄԻ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՀԱՏՈՒԿ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՆՁԱՆՑ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության 2003 թվականի դեկտեմբերի 3-ի ՀՕ-40-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 5-րդ կետով.

5) Ամենայն Հայոց Կաթողիկոսին:

Հոդված 2. Օրենքը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 7.1-ին հոդվածով՝

«*Հոդված 7.1. Ամենայն Հայոց Կաթողիկոսի պետական պահպանությունը*

Ամենայն Հայոց Կաթողիկոսին պետական պահպանություն տրամանադրվում է նրա կաթողիկոսական ձեռնադրման պահից՝ մինչեւ գահակալության ավարտը:»

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: Սույն օրենքի գործողությունը տարածվում է նաեւ դրա ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ գահակալող Ամենայն Հայոց Կաթողիկոսի վրա:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՏՈՒԿ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՆՁԱՆՑ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ընթացիկ իրավիճակը եւ խնդիրները ներկայումս. ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածի 1-ին մասին համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունը ճանաչում է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու՝ որպես ազգային եկեղեցու բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի հոգեւոր կյանքում, նրա ազգային մշակույթի զարգացման եւ ազգային ինքնության պահպանման գործում:

Հայաստանի Հանրապետության եւ Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցու առանձնահատուկ հարաբերությունները կարգավորված են 2007թ.-ի փետրվարի 22-ին Հայաստանի Հանրապետության Ազգայի ժողովի կողմից ընդունված «Հայաստանի Հանրապետության եւ Հայաստանյաց Առաքելական եկեղեցու հարաբերությունների մասին» օրենքով:

Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցու բարձրագույն հոգեւոր պետը Ամենայն Հայոց Կաթողիկոսն է: Դեռեւս խորհրդային տարիներից Ամենայն Հայոց Կաթողիկոսի անվտանգության ապահովումը եղել է պետական հոգածության առարկա: Հայաստանի Հանրապետության տարածքում եւ տարածքից դուրս գտնվելու ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսի անվտանգության ապահովումը բխում է ՀՀ Սահմանադրության եւ պետություն-ազգային եկեղեցի առանձնահատուկ հարաբերությունների տառից եւ ոգուց:

Ներկայումս «Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը չի երաշխավորում Ամենայն Հայոց Կաթողիկոսի անվտանգության ապահովումը՝ օրենքի Կաթողիկոսի անվտանգության մասով կիրառումը թողնելով վարչապետի հայեցողությանը: Մինչդեռ թե Հայաստանի Հանրապետության տարածքում, եւ թե արտասահմանում ժամանակակից վտանգները հստակ մարտահրավեր են Ամենայն Հայոց Կաթողիկոսի անվտանգության ապահովման համար, ինչի վառ օրինակն է վերջին շրջանում Ամենայն Հայոց Կաթողիկոսի նկատմամբ ոտնձգությունները:

Կարգավորման նպատակը. Կարգավորման նպատակն է իրավական երաշխիքներ սահմանել Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցու բարձրագույն հոգեւոր պետ Ամենայն Հայոց Կաթողիկոսի անվտանգության ապահովման համար:

Ակնկալվող արդյունքը. Նախագծի ընդունման դեպքում օրենքով սահմանված կարգով կերաշխավորվի Ամենայն Հայոց Կաթողիկոսի անվտանգության ապահովումը ճիշտ այնպես, ինչպես երաշխավորված է Հայաստանի Հանրապետության նախագահի, վարչապետի եւ Ազգային ժողովի նախագահի անվտանգությունը: Նախագծի ընդունման դեպքում Ամենայն Հայոց Կաթողիկոսի անվտանգության ապահովումը կերաշխավորվի օրենքով, այլ ոչ թե վարչապետի

հայեցողությամբ: Օրենքով սահմանված կարգով Ամենայն Հայոց Կաթողիկոսի անվտանգության ապահովումը կանխարգելիչ դերակատարություն կունենա Հայաստանի Հանրապետության տարածքում եւ տարածքից դուրս Ամենայն Հայոց Կաթողիկոսի անվտանգության սպառնալիքների չեզոքացման եւ կանխարգելման համար: